

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

ԱՂԵՐՍ

Ս. Ֆրանչիսկոսի հետևողությամբ

Խաղաղության քո, Տե՛ր, լինեմ ես ռահվիրան,
Սե՛ր տարածեմ՝ փոխարենը ատելության,
Ու տխրության մռայլ պահին՝ ուրախություն:
Սև կասկածի հողում հավա՛տ ես սերմանեմ,
Անհուսության դառը պահին հո՛ւյս ներշնչեմ,
Խարխափողին խավարի մեջ ես լո՛ւյս լինեմ:

Տո՛ւր զորություն, որ հավատով հավետ ձգտեմ
Մխիթարել՝ մխիթարվել ցանկալու տեղ,
Ճիշտ հասկանալ՝ հասկանալի լինելու տեղ,
Աղերսելու փոխարեն սեր՝ մարդկա՛նց սիրեմ:

Տալո՛վ է, որ տրվում է, Տե՛ր, մեզ անսահման,
Ներելով է, որ քավվում են մեղքերը մեր,
Եվ մեռնելով վասն հայրենյաց՝ նոր ենք ծնվում,
Անմահության երջանիկ կյանքն ենք ժառանգում:

Խաղաղության քո, Տե՛ր, լինեմ ես ռահվիրան...

ԱՍԻԶԻ

Ուխտավորներ խաղաղության աղերսով,
Ողջ աշխարհի չորս ծագերից հավաքվել,
Ծոմապահում, աղոթում ենք, պաղատում,
Որ Դու լսես մեր աղերսն ու ողորմես:

Մեղքե՞րն արդյոք մեր անհամար, անպարփակ
Եվ քարացած, ապար դարձած մեր սրտե՞րն,
Տե՛ր, փակել են ողորմության դուռը Քո,
Հասի՛ր Դու մեզ՝ կորուսելոցս օգնության:

Աշխարհն է մեր ալեկոծվել, փոթորկվել,
Ապգ-ապգի դեմ թշնամացել է քենով,
Սև ամպի պես ատելությունն է դիպվել,
Արդարության կանչն է խեղդվել, սպանվել:

Մահվան վենքեր դու մի շինիր, կուտակիր,
Եղբայր անգին, Կայե՞ն ես դու դառնալու...
Փշրի՛ր վենքերն, խաղաղությա՛ն ծառայիր,
Ողջ մարդկության եղբայրության դու ձգտիր:

Մենք՝ ուխտավոր, լեռների մեջ սրբական,
Ասիպացու անվամբ կոչվող քաղաքում,
Մեր ձեռքերում ձիթենու ոստ ու շրթին՝
Խաղաղության կոչն անվարան ենք երգում:

Ողջո՞ւյն սիրո և հաշտության քեզ, եղբայր,
Իմ հարազատ, իմ հեռավոր մերձավոր,
Բիբլիական հայ աշխարհից քեզ ողջույն,
Խաղաղությո՞ւն ալեկոծված աշխարհին:

27 հոկտ. 1986 թ.